



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ապրիլի 2023թ. N 194-Ա

ԳԱՅԱՆԵ ՓՐՎԵՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 3-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 51-րդ կետերի, հաշվի առնելով, որ ավտոտնակը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի էական խախտումներով, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, նրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով Գայանե Արեստի Փրվեյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Գայանե Արեստի Փրվեյանի (ծնված՝ 1966 թվականի մայիսի 2-ին) կողմից Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի հարևանությամբ գտնվող Բյուրեղավան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00235 հեկտար մակերեսով հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-003-0029-0022, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023TEMGMN) ինքնակամ կառուցված 21.5 քմ ներքին (23.5 քմ արտաքին) մակերեսով բնակելի նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ ավտոտնակ) ավտոտնակը ճանաչել Բյուրեղավան համայնքի սեփականությունը:

2. 21.5 քմ ներքին (23.5 քմ արտաքին) մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական և կատարել պետական գրանցում՝ ըստ որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված ավտոտնակի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերի:

3. Ավտոտնակին և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 50/23:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. ապրիլի 03

ք. Բյուրեղավան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ապրիլի 2023թ. N 195-Ա

ԳՈՀԱՐ, ԳԱՐԻԿ, ՆԵՐՍԵՍ, ԱՆՅՈՒՏԱ ԵՎ ԱՆՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի,
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման
N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Գոհար, Գարիկ, Ներսես,
Անյուտա և Աննա Մանուկյանների հայտը՝ **որոշում եմ**.

1. Գոհար, Գարիկ, Ներսես, Անյուտա և Աննա Մանուկյաններին տալ նախագծման թույլտվություն
(ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ սեփականության իրավունքով իրենց
պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ
Ջրաբեր 1-ին փողոց 34 հասցեի (ծածկագիր՝ 07-055-0006-0001, վկայական N 26112021-07-0106)
բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական
նշանակության հողամասում տնտեսական շինության կառուցման աշխատանքների նախագծային
փաստաթղթերի մշակման համար (N 15 ճարտարապետահատակագծային առաջադրանքը կցվում
է):

2. Գոհար, Գարիկ, Ներսես, Անյուտա և Աննա Մանուկյաններին՝

- 1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման.
- 2) կառուցապատման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման
N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր
առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

04.04.2023

X

VERIFIED OCSP 04.04.2023 15:20:24 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. ապրիլի 04

ք. Բյուրեղավան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ապրիլի 2023թ. N 196-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի և հիմք ընդունելով Պետրոս Գուրգենի Մայանցի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Պետրոս Գուրգենի Մայանցին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 14-րդ թաղամաս 18 անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0143-0009) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 8-րդ փողոց 20:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

04.04.2023



VERIFIED OCSP 04.04.2023 15:23:16 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayg@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ապրիլի 2023թ. N 197-Ա

«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2023 /2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ՝
ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի,
Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 25-ի N 264-Ա որոշման 1-ին կետի
3-րդ ենթակետի և հիմք ընդունելով «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց»
արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության
տնօրենի 2023 թվականի ապրիլի 03-ի զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական
ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում 2023/2024
ուսումնական տարվա ընդունելության տեղերը՝ ըստ մասնագիտությունների՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

04.04.2023

X 
VERIFIED OCSP 04.04.2023 15:11:51 GMT+4
Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ապրիլի 2023թ. N 198-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2023 թվականի փետրվարի 28-ի N 01/12/01289-2023 գրությամբ տրված համաձայնությունը՝ **որոշում եմ.**

1. Փոփոխել Բյուրեղավան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության 1.137833 հեկտար (07-003-0016-0021 ծածկագրից) և 1.263854 հեկտար (07-003-0053-0017 ծածկագրից) հողամասերի գործառնական նշանակությունները՝ դարձնելով բնակելի կառուցապատման՝ համաձայն համաձայնեցված հատակագծերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

05.04.2023

X 
VERIFIED OCSP 05.04.2023 16:57:25 GMT+4
Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ապրիլի 2023թ. N 199-Ա

«ՋՐԱԲԵՐ ԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի
և 219¹-րդ հոդվածի ու հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքապետարանի վարչական
իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող աշխատանքային խմբի
արձանագրությունը՝ **որոշում եմ**.

1.«Ջրաբեր Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Գևորգ
Հրաչիկի Հայրապետյանի, ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Ջրաբեր
Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով
պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Ջրաբեր Երևան-Սևան մայրուղի 25 կմ
հասցեի հարևանությամբ գտնվող հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու
համար:

2. «Ջրաբեր Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել
տուգանք հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար՝ սահմանված
նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100000 (մեկ հարյուր հազար)
Հայաստանի Հանրապետության դրամ:


3.Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305-րդ հոդվածի
համաձայն՝ «Ջրաբեր Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից
տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը ընկերությանը հանձնելու օրվանից ոչ ուշ, քան
տասնհինգ օրվա ընթացքում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202106
հաշվեհամարին:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Բյուրեղավան համայնքի ղեկավարին կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա ընդունման մասին «Ջրաբեր Գազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. ապրիլի 05
ք. Բյուրեղավան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ապրիլի 2023թ. N 200-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 51-րդ կետերի ու հիմք ընդունելով Գյուլնարա Արզումանի Սարգսյանի լիազորված անձ Երվանդ Ֆրիկի Շուշանյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Գյուլնարա Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքում գտնվող անշարժ գույքին (ծածկագիր՝ 07-003-0031-0006) տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 6:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

05.04.2023

X

Balasyan Hakob

VERIFIED OCSP 05.04.2023 17:03:31 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ապրիլի 2023թ. N 201-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի
N 07-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով
համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանի
զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 11-ի «Անշարժ գույքին հասցե
տրամադրելու մասին» N 07-Ա որոշման 1-ին կետում «42» թիվը փոխարինել «52» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

06.04.2023

X *Խ. Բալասյան*

VERIFIED OCSP 06.04.2023 12:33:19 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. ապրիլի 06
ք. Բյուրեղավան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ապրիլի 2023թ. N 202-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 51-րդ կետերի, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Արխիվային տարածքային ներկայացուցչության տված 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N ԱԲ-3158 արխիվային տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու Հրաչ Վաղինակի Ավետիսյանի լիազորված անձ Վաղինակ Հրաչի Ավետիսյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Բյուրեղավան 1 փողոց 23 անշարժ գույքին (ծածկագիր՝ 07-003-0026-0003) տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 1-ին փողոց 23:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

06.04.2023



VERIFIED OCSP 06.04.2023 12:36:23 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ապրիլի 2023թ. N 203-Ա

ՎԱՀՐԱՄ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Վահրամ Վանիկի Շահնազարյանի հայտը՝ **որոշում եմ**.

1. Վահրամ Վանիկի Շահնազարյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամասի 1-ին փողոց 65 հասցեի (ծածկագիր՝ 07-003-0040-0031, վկայական N 29032023-07-0160) բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում նկուղով երկհարկանի բնակելի տան կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար (N 16 ճարտարապետահատակագծային առաջադրանքը կցվում է):

2. Վահրամ Վանիկի Շահնազարյանին՝

1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման.

2) կառուցապատման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

06.04.2023



VERIFIED OCSP 06.04.2023 12:20:04 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. ապրիլի 06
ք. Բյուրեղական



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ապրիլի 2023թ. N 204-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության դիմումը, գործյունն ու լիազորագիրը՝ **որոշում եմ**.

1. Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Ջրաբեր 3-րդ փողոց 18 (միացման պատվեր N 92258111, 9904-ԷՄ, 0.4 կՎ) հասցեի էլզա Նորայրի Գևորգյանին պատկանող անշարժ գույքի էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման (կառուցման) նպատակով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի (N 17 շինարարության թույլտվությունը կցվում է):

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝

1) համայնքապետարանի 900105202510 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ՝ տեղական տուրք շինարարության թույլտվության համար.

2) շինարարությունն սկսել տեղական տուրքը վճարելուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

06.04.2023

VERIFIED OCSP 06.04.2023 13:06:01 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. ապրիլի 06
ք. Բյուրեղավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ապրիլի 2023թ. N 205-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության դիմումը, գործությունն ու լիազորագիրը՝ **որոշում եմ**.

1. Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 18/40 (միացման պատվեր N 90168111, 9592-ԷՄ, 0.4 կՎ) հասցեի Շանթ Էդվարդի Սանթրոսյանին պատկանող անշարժ գույքի էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման (կառուցման) նպատակով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի (N 16 շինարարության թույլտվությունը կցվում է):

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝

1) համայնքապետարանի 900105202510 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ՝ տեղական տուրք շինարարության թույլտվության համար.

2) շինարարությունն սկսել տեղական տուրքը վճարելուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

06.04.2023



VERIFIED OCSP 06.04.2023 12:53:50 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. ապրիլի 06
ք. Բյուրեղական



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ապրիլի 2023թ. N 206-Ա

**ԱՆՆԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2023 թվականի մարտի 29-ի N 01/12/01927-2023 գրությամբ տրված համաձայնությունը և Աննա Ղուկասյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Փոփոխել Աննա Արամի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 1/7/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 0.01317 հեկտար (կադաստրային ծածկագիր 07-003-0020-1072) հողամասի գործառնական նշանակությունը՝ դարձնելով հասարակական կառուցապատման՝ համաձայն համաձայնեցված հատակագծի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

06.04.2023



VERIFIED OCSP 06.04.2023 16:37:55 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ապրիլի 2023թ. N 207-Ա

**ԱԼՎԱՐԴ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Ալվարդ Կարապետի Հայրապետյանի հայտը՝ **որոշում եմ**.

1. Ալվարդ Կարապետի Հայրապետյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Ամառանոցային փողոց 21 հասցեի (ծածկագիր՝ 07-051-0136-0012, վկայական N03042023-07-0004) բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում օժանդակ շինության կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար (N18 ճարտարապետահատակագծային առաջադրանքը կցվում է):

2. Ալվարդ Կարապետի Հայրապետյանին՝

- 1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման.
- 2) կառուցապատման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. ապրիլի 07
ք. Բյուրեղական



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ապրիլի 2023թ. N 208-Ա

ՊԵՏՐՈՍ ՄԱՅԱՆՑԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Պետրոս Գուրգենի Մայանցի հայտը՝ **որոշում եմ.**

1. Պետրոս Գուրգենի Մայանցին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուրնուս Դարանի թաղամասի 8-րդ փողոց 20 հասցեի (ծածկագիր՝ 07-051-0143-0009, վկայական N 06042023-07-0144) բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում բնակելի տան վերակառուցման և լողավազանի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար (N 17 ճարտարապետահատակագծային առաջադրանքը կցվում է):

2. Պետրոս Գուրգենի Մայանցին՝

1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման.

2) կառուցապատման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Ը. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. ապրիլի 07
ք. Բյուրեղավան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ապրիլի 2023թ. N 209-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի և հիմք ընդունելով Սամվել Սեմյոնի Գալուստյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Սամվել Սեմյոնի Գալուստյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Այգեգործական տարածք 185 անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0129-0023) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 185:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ապրիլի 2023թ. N 210-Ա

**ԲՈՐԻՍ ԲԱՂՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի, հաշվի առնելով «Հաբշին Նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի մարտի 29-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինությունները կառուցվել են 2008 թվականին, հիմք ընդունելով չափագրման հատակագծերն ու Բորիս Գեորգիի Բաղյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Քաղաքացի Բորիս Գեորգիի Բաղյանին սեփականության իրավունքով պատկանող 07-003-0044-0005 կադաստրային ծածկագրով, 0.0473 հեկտար մակերեսով Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան թիվ 6 անշարժ գույքի հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան
Հայրենադարձ թաղամաս 6:

2. Քաղաքացի Բորիս Գեորգիի Բաղյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Հայրենադարձ թաղամաս 6 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-003-0044-0005, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023PVZPNL) 0.0473 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 10.24 քմ մակերեսով աստիճանները, 28.94 քմ մակերեսով ծածկերը, 7.48 քմ արտաքին (5.66 քմ ներքին) մակերեսով օժանդակ շինությունը, 5.76 քմ մակերեսով հենապատերը, և 5.24 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3. Բորիս Գեորգիի Բաղյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 96470 (իննսունվեց հազար չորս հարյուր յոթանասուն) դրամ՝ ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճար:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում սույն որոշումն համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. ապրիլի 07
ք. Բյուրեղավան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՂԱՆՔ)

N 15 04 ԱՊՐԻԼԻ 2023թ.

Օբյեկտ՝ **Տնտեսական շինության կառուցման** նախագծային փաստաթղթերի մշակման համար:
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

«Աշխարանքային նախագիծ», (II կարգգորիա), միջին ռիսկայնության աստիճան

(հակիրճ բնորոշումը, հզորությունը ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Ջրաբեր 1-ին փողոց 34 (ծածկագիր՝ 07-055-0006-0001)**
բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.2211 հա
հողամաս

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **Գոհար Վազգենի Մանուկյանի, Ներսես, Անյուտա, Գարիկ և Աննա Քաջիկի Մանուկյաններ (ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Ջրաբեր 1-ին փողոց 27), հեռ. 098-78-57-46**
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը **սեփականության վկայական N 23112021-07-0106,**
կառուցապատման հայտ, Էսքիզային նախագիծ

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **12ամիս**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է **բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության**
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (*) Հողամասի չափերը **0.2211 հա.**
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))
3. Հողամասի առկա վիճակը **Մեղմ ռելիեֆ, տնտեսական շինության կառուցում**
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)
4. (*) Տրանսպորտային պայմանները **ներհամայնքային նշանակության ճանապարհներ**
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր
և սարքավորումներ
(ջրամատակարարման,
կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

համաձայն հափալագների (սխեմաներ)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

Բնակելի շինություններ և բնակելի կառուցապատման հողամասեր, ճանապարհներ

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

նախագիծը մշակել համաձայն տրված առաջադրանքի

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9.

Ճարտարապետահատակագծային պահանջներ

դեկլարվել ՀՀ գործող նորմերին համապատասխան ըստ միջավայրի պայմանների, հաշվի առնել միջավայրի քաղաքաշինական առանձնահատկությունները, հափալագային լուծումները ըստ պարզվորարուի առաջադրանքի, ըստ միասնական պահանջներ սահմանող ուղեցույցի, կառուցվող նախագծի վերաբերյալ

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ծավալուման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Պահպանել կառուցվող շինության հեռավորությունը կարմիր գծից

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

համաձայն կարգի

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)
հողի մակերես 0.2211 հա.

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

3%

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ)

30%

հարաժեքի հարաբերությունը
հողամասի մակերեսին՝
տոկոսներով (%)

9.6. կանաչապատման տոկոսը
(կանաչապատ տարածքի
հարաբերությունը հողամասի
մակերեսին՝ տոկոսներով (%)

70%

9.7. այլ պահանջներ

տարածքում տեղադրել ինֆորմացիոն վահանակ

10. Հողամասում գտնվող շենքերի
ու շինությունների քանդման կամ
տեղափոխման
(ապամոնտաժման) պայմանները
և աշխատանքների
հերթականությունը

անհրաժեշտություն չկա

11. Ստորգետնյա, կիսանկուղի և
առաջին հարկերի տարածքների
օգտագործման պայմանները

համաձայն կարգի

12. (*) Ինժեներական ցանցեր և
սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու
ցանցերի նկատմամբ

համաձայնեցնել իրավասու կազմակերպությունների հետ

12.1. (*) ջրամատակարարում,
կոյուղի, տաք ջրի
մատակարարում

Կցվում է «ՎԵՈՒԽԱ ՋՈՒՐ» փակ բաժնեկրիական ընկերություն
«Կոփայր» ՋՕԸ

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Կցվում է «ՀԷՑ» ՓԲԸ, «ԽՍՍ» տնօրինության «Նաիրի» էլեկտրական ցանցեր

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արովյանի ԳԳՄ

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային
հաղորդակցության մալուխատար
կոյուղու (ներառյալ դիտահորը)
տեղադիրքը

Համաձայն կարգի

(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված
ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

Չկան

12.6. աղբահանություն

Կնքել համապատասխան պայմանագիր աղբահանություն կազմակերպող
իրավասու կազմակերպության հետ

13. Տարածքի ինժեներական
նախապատրաստում

համաձայն գործող կարգի

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

ապահովել հարակից տարածքի մաքրությունը, կանաչապատումը,
բարեկարգումը

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական
փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

Քար, Երկաթ/բետոն, տուֆ, մետաղ, փայտ, ավազ, և այլն՝ ըստ
համաձայնեցված նախագծի

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ձկատների
լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

շինարարության ընթացքում ստեղծել անհրաժեշտ պաշտպանական միջոցներ

17. Հակահրդեհային պահանջներ ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները համաձայն գործող կարգի
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և
բնակչության սակավաշարժ
խմբերի պաշտպանության
միջոցառումներ

Համաձայն գործող կարգի

19. Շրջակա միջավայրի
պահպանում

Չիրականացնել վրանգավոր միջոցառումներ, որը կթողնի բացասական
ազդեցություն շրջակա միջավայրի վրա, ըստ գործող նորմերի

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության
կազմակերպում

ճանապարհի երթևեկելի մասում չստեղծել երթևեկությանը խոչնդող
հանդիսացող պայմաններ

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման,
քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության
ժամկետը և նախագծի մշակման
փուլերը

12 (տասներկու) ամիս

(մշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային
փաստաթղթերի
փորձաքննությանը
ներկայացվող
պահանջներ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի

№ 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի
երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ
համաձայնեցում

Անհրաժեշտություն չկա

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում
շահագրգիռ մարմինների հետ էքսիզային նախագծի նախնական համաձայնեցում, մշվում է նաև առաջադրանքի
փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական
քննարկումներ

ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների
համաձայն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների
կամ մասնագիտական
եզրակացությունների
ստացում

նախագիծը համաձայնեցնել Բյուրեղավանի համայնքապետարանի հետ և ինժեներական
ենթակառուցվածքի տեղափոխման անհրաժեշտության դեպքում պայմանների
վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ
(օգտագործողի) հետ՝ մինչև նախագծային աշխատանքներն սկսելը

